2025 թվականի ապրիլի 14ին՝ ժամը 11^{30}, ՀՀ Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանում՝ Վ.Սարգսյան փողոց, թիվ 94 հասցեում, կայանալու է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարում՝ բաց դասական աճուրդի միջոցով:

Աճուրդի են դրվում հետևյալ լոտերը՝

Լոտ 1 - Տաշիր համայնք, ք.Տաշիր հասցեում գտնվող գյուղատնտեսական նշանակության 5564,8քմ (ծածկագիր՝ 06-008-0331-0012) խոտհարք հողատեսքը 544000 (հինգ հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով

Լոտ 2 - Տաշիր համայնք, ք.Տաշիր, Վ. Սարգսյան փողոց, թիվ 116/17 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 44,2քմ (ծածկագիր՝ 06-008-0209-0073) բնակելի կառուցապատման հողամասը 35500 (երեսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ մեկնարկային գնով:

Լոտ 3 - Տաշիր համայնք, գյուղ Ձորամուտ, գ.Գոգավան, 2-րդ փողոց , թիվ 2 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 1281քմ (ծածկագիր՝
06-067-0110-0008) բնակելի կառուցապատման հողամասը 296000 (երկու հարյուր իննսունվեց հազար) ՀՀ դրամ մեկնարկային գնով:

Լոտ 4 - Տաշիր համայնք, գյուղ Ձորամուտ, գ.Գոգավան, 2-րդ փողոց , թիվ 4 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 2225,7քմ (ծածկագիր՝ 06-067-0110-0009) բնակելի կառուցապատման հողամասը 514250 (հինգ հարյուր տասնչորս հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ մեկնարկային գնով:

Հողամասերիի նկատմամբ սահմանափակումներ չկան, նրանց օգտագործումը սերվիտուտ չի առաջացնում, հարում են հաղորդակցության ուղիներին:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.

ա) հայտ,

բ) աճուրդին մասնակցության համար սահմանված դրամի չափով վճարի անդորրագիր,

գ) անձնագիր, իրավաբանական անձանց համար հիմնադիր փաստաթղթերը:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է սույն թվականի ապրիլի 9 -ը: Վաճառվելիք լոտերին մասնակիցները կարող են ծանոթանալ մինչև աճուրդի բացման նախորդող օրը՝ յուրաքանչյուր երեքշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 10:00-17:00 ընկած ժամանակահատվածում (բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի):

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը համարվում է աճուրդում հաղթած մասնակից:

Նախավճարի չափը մեկնարկային գնի 50 % չափով, աճուրդի մասնակցության վճարը՝ 2000 դրամ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Տաշիրի համայնքապետարան (0254) 2-29-31,2-34-06 հեռախոսահամարներով: